ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՎԵՑ ՄԱԼԻՇԿԱՅԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 4-ին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Սյունեաց թեմում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Սրբազան Հայրերի, օծվեց ևս մի հոգևոր տուն՝ Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին:

Հայրենի գյուղում կառուցված եկեղեցու հովանավորը ներկայումս Մոսկվայում բնակվող հայ գործարար, «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանն էր: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր երեք տարի առաջ, իսկ այսօր գյուղի բարձունքում փառահեղ հառնել է նորակառույց եկեղեցին: Բազալտակուռ եկեղեցու ճարտարապետը Արծրուն Գալիկյանն է: Եկեղեցին զարդարված է էջմիածնաբնակ երեք նկարիչների գեղեցիկ որմնանկարներով՝ քրիստոնեական սրբերի պատկերներով:

Բազմահազար ժողովուրդ էր եկել Մալիշկա՝ մասնակցելու օծման սրբազան արարողությանը: Այստեղ էին ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, Երևանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը, հատուկ օծման արարողության առիթով Ռուսաստանից Հայաստան ժամանած «Ռուսաստանի հայերի միության» պատվիրակությունը, որոնց թվում ՌԴ պառլամենտի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովը, հայտնի քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը, բազմաթիվ ռուս հյուրեր: Վերջիններիս ներկայությունը հավաստիքն էր ռուս-հայկական դարավոր բարեկամության, որին և նվիրվում էր եկեղեցու բակում կառուցված աղբյուր-հուշարձանը:

Իր ուրախությունը հայտնելով 1700-ամյա հոբելյանի նախաշեմին ևս մի լույսի խորան կառուցված տեսնելու առիթով, Հայոց Հայրապետը իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարին, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանին, հայցեց Տիրոջ սերն ու զորակցությունը, որպեսզի անբեկանելի ու հաստատուն լինի հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Ս. Աննա եկեղեցուն Վեհափառ Հայրապետը, որպես խորհրդանիշ Ս. Հոգու, նվիրեց մյուռոնաթափ աղավնի:

Հավարտ Սրբազան արարողության կատարվեց երեխաների մկրտություն: Եկեղեցու բակում կատարվեց նաև ծառատունկ, որ կազմակերպել էր «Հայաստան-ծառ» ամերիկահայ կազմակերպությունը: